ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աբովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրերի քննարկման վերաբերյալ հանրային բաց լսում

Ամսաթիվ՝ Մայիսի 12

Ժամ՝ 15:00

Սույն թվականի մայիսի 12-ին Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ, 1 շենք) տեղի ունեցավ հանրային բաց լսում: Նիստը վարում էր Աբովյան համայնքի ղեկավարի օգնական՝ Դիաննա Երեմյանը: Նա ներկայացրեց <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 82-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսվում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը: ՀՀՀԶԾ-ում ընդգրկված առաջնահերթ ծրագրերից են՝

1.Քաղաքաշինության ոլորտի բարեփոխումները

2.Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումները

3.Բնակարանային-կոմունալ տնտեսության ոլորտում իրականացվող բարեփոխումները

4.Բնապահպանության ոլորտում անցկացվող բարեփոխումները

5.Կրթության բնագավառի բարեփոխումները:

Հանրային քննարկման մասին հայտարարությունը տեղադրվել է Աբովյանի պաշտոնական կայքում (abovyan-kotayk.am):

<u>Օրակարգում</u>

1. Աբովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրերի նախագծի ներկայացում

2.Քննարկում շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ

Ելույթ ունեցան՝

Զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Անուշ Ծատուրյանը ներկայացնելով նախագիծը նշեց, որ աշխատանքը կատարվել է քաղաքապետարանի բոլոր բաժինների և ավագանու անդամների համատեղ աշխատանքի շնորհիվ: Ներկայացնելով ոլորտային ծրագրերի ցանկը նշեց, որ հիմնականում ներգրավել են ասֆալտի փոսային վերանորոգման աշխատանքներ Աբովյան քաղաքի ամբողջ տարածքում և համայնքի մնացած բնակավայրերում, ուշադրություն է դարձվել լուսավորության համակարգին ամբողջ համայնքի տարածքում: Կտեղադրվեն ճանապարհային նշաններ և խելացի լուսացույցներ՝ անվտանգ երթևեկություն ապահովվելու նպատակով, ինչպես նաև զբոսայգու և խաղադաշտի կառուցում: Հնգամյա զարգացման ծրագրի մեջ ներառված են այն բոլոր ծրագրերը որոնք համայնքի ղեկավարը նշել էր իր նախընտրական ծրագրերում: Հիմնականում ներառված է սուբվենցիոն ծրագրեր, բացի դա կան ծրագրեր որոնք ակնկալում ենք դոնոր կազմակերպությունների մասնակցությունը: Հիմնվելու են երեք բյուջեների վրա դրանք են՝ քաղաքապետարանը, պետությունը և դոնոր կազմակերպությունները որոնց առկայությունը շատ կարևոր է: Նախատեսվում է որոշ մանկապարտեզների տանիքների վերանորոգում, որոշ մանկապարտեզների հիմնանորոգում կապված շենքային պայմաններից: Մարզադաշտ տանող ճանապարհին կապող աստիճանների հիմնանորոգում, ջեռուցման համակարգի փոխում, վերազինում: Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, թվով 292 վերելակների արդիականացման աշխատանքներ, կոյուղագծերի անցկացում 7-րդ և 8-րդ մ/շ-ում:Աբովյան համայնքի Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի, Վերին Պտղնի բնակավայրերում նույնպես նախատեսվում են աշխատանքներ՝ փողոցների ասֆալտապատում, վերանորոգում, ջրահեռացման համակարգերի կառուցում, լուսավորության համակարգի կառուցում, գազաֆիկացում: Արամուս բնակավայրում նոր կառուցվող մանկապարտեզի գույքի ձեռքբերում, Բալահովիտ բնակավայրում մանկապարտեզի կառուցում 70 երեխայի համար, Վերին Պտղնի բնակավայրում գերեզմանների հարակից տարածքի ասֆալտապատում և Երևան-Սևան ճանապարհի գետնանցման հիմնանորոգման աշխատանքներ:

Հարց ու պատասխան՝

<<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության ավագանու անդամ Անի Թենեքեջյանը հարցրեց արդյոք նախատեսվում է շենքերի շքամուտքերի վերանորոգում :

Անուշ Ծատուրյանը պատասխանեց շենքերի շքամուտքերի վերանորոգում նախատեսվում է:

Հարց հնչեցրեց Գետարգել բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Թորոսյանը՝ երբ է նախատեսվում գյուղի ճանապարհների փոսալցումներ:

Անուշ Ծատուրյանը պատասխանեց՝ նախագիծը հաստատվելուց հետո, կանցնեն արդեն շինարարական աշխատանքների:

Կամարիս բնակավայրի վարչական ղեկավար Հովհաննես Սարգսյանը հարցրեց արդյոք նախատեսվում է գյուղի ներհամայնքային գրունտային ճանապարհների հարթեցման աշխատանքներ եթե ոչ, որպես հրատապ խնդիր կարող են ներառել: Անուշ Ծատուրյանը պատասխանեց, որ ներառված է Կամարիս բնակավայրի 7-րդ և 3-րդ փողոցների ասֆալտապատում, աշխատանքները ընտրվել են ըստ առաջնահերդության, առաջարկությունները պետք է ավելի վաղ ներկայացվեր: Ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետի պաշտոնակատար Աննա Չոբանյանը պատասխանելով նույն հարցին հավելեց որ եթե լինեն ընթացիք խնդիրներ դրանք կամփոփենք որից հետո բյուջեի միջոցների հնարավորության դեպքում կփորձենք բոլոր բնակավայրերի հրատապ խնդիրներին ընթացք տալ:

Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մովսիսյանը և Աբովյանի քաղաքային տնտեսության բաժնի պետի պաշտոնակատար Սևակ Ասրյանը քննարկելով վերելակների վերանորոգման հարցը նշեցին, որ այս տարի կվերանորոգվեն բոլոր վերելակների խցիկները, իսկ հաջորդ տարիներին վերելակների շարժիչների փոխարինում կկատարվի:

Վերջին հարցը հնչեցրեց քաղաքացի Մելքոն Նաջարյանը՝ արդյոք նախատեսվում է վերանորոգման և փոսալցման աշխատանքներ ուսանողական թաղամաս տանող ճանապարհի համար:

Անուշ Ծատուրյանը պատասխանելով հարցին հիշեցրեց, որ դա ընդգրկված է Աբովյան քաղաքի ընդհանուր փոսալցման աշխատանքների մեջ, մրցույթը հայտարարված է աշխատանքները շուտով կմեկնարկեն:

Նախագիծը մասնակիցների կողմից հավանության արժանացավ:

Աբովյան համայնքի ղեկավարի օգնական՝ Դիաննա Երեմյանը շնորհակալություն հայտնեց ներկաներից Աբովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրերի վերաբերյալ հանրային բաց լսումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝ Դիաննա Երեմյան

Արձանագրող՝ Լ.Գրիգորյան